ԱՔԵՄԵՆՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 13-ՐԴ ԵՎ 18-ՐԴ ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՔՍԻՄ ԿԱՏՎԱՅԱՆ

Արևելագիտության մեջ իշխում է այն կարծիքը, որ Ուրարտու=Արարատ երկրանունը Հերոդոտի Պատմության մեջ հիշատակվում է «ալարոդիներ» (ἀλαρόδιοι) ձևափոխությամբ՝ իբրև ցեղանուն։ Քանի որ Հերոդոտն «ալարոդիներին» հիշատակել է «մատեիններ» և «սասպիրներ» կոչվող ցեղերի հետ՝ որպես Աքեմենյան աշխարհակալության 18-րդ վարչամիավոր, ուստի եզրակացնում են, որ Հայաստանը մ. թ. ա. VI դ. վերջում եղել է տարացեղ և տրոհվել է երկու սատրապության։

«Ալարոդիներ» ցեղանունը Ուրարտու=Արարատ երկրանվան հետ նույնացվելու ենթադրության առաջին հեղինակն է ֆրանսիացի արևելագետ Ֆ. Լենորմանը։ Ելնելով այն բանից, որ ըստ Հերոդոտի «ալարոդիները» տարազով ու զինվածությամբ նման էին կոլքերին, Ֆ. Լենորմանը «ալարոդիներին» համարեց վրացական ցեղ և նրանց վերագրեց բևեռագրերի լեզուն՝ նույնություն որոնելով «ալարոդիներ» և «Ուրարտու» անունների միջև[1]։

Իսկ արևելագետ Էդ. Մայերը «ալարոդիներ» ցեղը զետեղելով Երասխի հովտում ու Վանա լճի շրջանում՝ գտավ, որ «Ուրարտու» երկրանունը Հերոդոտի ժամանակ (մ. թ. ա. V դ.) վերածվել էր ցեղանվան[2]։ Գիտնականի այս ենթադրությունը, որն անշուշտ, սխալ է, այժմ ստացել է անառարկելի ճշմարտության գույն։

Իրականում Հերոդոտի հաղորդումներից անկարելի է հանգել այդպիսի հետևության. «Մատիենների, սասպիրների և ալարոդիների վրա դրված էր 200 տաղանդ տուրք։ Այդ 18-րդ մարզն է։ Մոսքերին, տիբարեններին, մակրոններին, մոսինիկներին և մարերին հրամայված էր վճարել 300 տաղանդ տուրք։ Այդ 19-րդ մարզն է»[3]։

Այս երկու հարկային վարչամիավորները, ըստ Հերոդոտի տեղեկությունների, մերձավորվել են թե՛ բնակության շրջաններով, թե՛ ցեղերի տարազով ու զինվածությամբ։ Հերոդոտը «մատիեններ» ցեղին հիշատակում է Կապադովկիայում՝ Հալիս գետի աջ կողմում։ Նա գրում է. «Միդիական և լուդիական թագավորությունների սահմանը Հալիս գետն էր, որը հոսում է Հայկական լեռներից [նախ դեպի] Կիլիկիա, այնուհետև աջով այն հոսում է մատիենների երկրով, իսկ ձախ կողմով՝ փռուգացիների երկրով։ Անցնելով Փռուգիան, դեռ դառնում է հյուսիս, ապա սահման կազմում աջ ափին սիրիական կապադովկացիների և ձախին՝ պափլագոնացիների միջև»[4]։ Հերոդոտը նաև վկայում

---

[1] F. Lenormant, Lettres Assyriologiques, I, Paris, 1871, p. 117—164.

[2] Ed. Mayer, Geschichte des Altertums, Bd. II, 2, 1928, S. 419.

[3] Геродот. История в девяти книгах, Ленинград, 1972, кн. III, 94.

[4] *Նույն տեղում, գիրք I, 72։*

է, որ այս մատիենները զինվել են պափլագոնացիների, կապադովկացի ասորիների ու փոքրասիական այլ ցեղերի նման, Քսերքսես Մեծի բանակում պափլագոնացիների հետ դասվել նույն զորախմբում[5]։

18-րդ սատրապության մեջ մտնող «մատիեններ» ցեղը պատմագիտության մեջ նույնացնում են ոչ թե Հալիս գետի վերին հոսանքի աջ կողմում տեղադրվող հիշյալ «մատիեններ»ի ցեղի, այլ Կապուտան (Ուրմիա) լճից հարավ՝ Փոքր Զավ գետի վերին հոսանքի շրջանում տեղադրվող Մատիենե երկրի հետ։

Սակայն Մատիենե երկիրը, որը Հերոդոտը հիշատակում է Փոքր Զավի վերին հոսանքի շրջանում[6], իսկ Ստրաբոնը՝ Հայաստանից հարավ-արևելք, Ատրպատականից կամ Փոքր Մարաստանից հարավ-արևմուտք, Մեծ Մարաստանից հյուսիս-արևմուտք՝ որպես Մեծ Մարաստանի ծայրամարզ[7], ոչ մի առնչություն չունի Հալիս գետի վերին հոսանքից աջ՝ Հյուսիսային Կապադովկիայում գտնվող «մատիեններ» կոչվող ցեղանվան հետ։ Վերջինիս մասին Հերոդոտի տեղեկությունն ուսումնասիրողներն անտեսում են, այդ ցեղի անունը շփոթելով Մարաստանի հիշյալ ծայրամարզի «Մատիենե» անվան հետ։

Ըստ Հերոդոտի, մատիեններն ունեցել են նույն տարազն ու զինվածությունը (հյուսված սաղավարտ, փոքր վահան, կարճ նիզակ, դաշույն, տեգ), ինչ պափլագոնացիները, որոնց հետ արշավանքի են գնացել միևնույն զորամասում՝ միևնույն զորավարի հրամանատարության ներքո[8]։

Հեկատեոս Միլետացին (մ. թ. ա. շուրջ 546—480) վկայում է, որ մատիենները մերձավոր էին մոսքերին ու կոլքերին (Μόσχοι, κόλχων ἔθνος, προσεχές τοῖς ματιηνοῖς)[9]։ Այս տեղեկությունը նույնպես հաստատում է, որ «մատիեններ» կոչվող ցեղը բնակվել է Հայաստանից հյուսիս-արևմուտք՝ մոսքերի ու կոլքերի մերձավորությամբ։ Ուստի այդ ցեղը չի կարելի նույնացնել կամ շփոթել Մարաստանի Մատիենե գավառի հետ։

Հերոդոտը «սասպիրներ» կոչվող ցեղը հիշատակում է Կողքիս երկրից և կոլքեր ցեղերից հարավ[10]։ Կողքիսը չի մտել Մարաստանի կամ Պարսկաստանի տիրակալության, այսինքն որևէ վարչամիավորման՝ սատրապության մեջ։ Կոլքերն ու նրանց հարևան ցեղերը մինչև Կովկասի լեռնաշղթան (Պարսից սզդեցության սահմանը) պարտավորվել են վճարել միայն «կամավոր նվերներ»,— գրում է Հերոդոտը[11]։ Այդ պատճառով նա Մարաց կամ Պարսից տիրակալության և Կողքիսի միջև հիշատակում է «սասպիրներ» ցեղը[12]։ Եթե, իհարկե, Հերոդոտը Կողքիսի հարևանությամբ գտնվող և կոլքերի զորամասում կռվող, կոլքերից տարազով ու զինվածությամբ գրեթե չտարբերվող «մարեր» կոչվող ցեղը[13] չի շփոթել մար-մեդացիների հետ։

---

5 Նույն տեղում, գիրք VII, 72։

6 Նույն տեղում, գիրք V, 52։

7 Страбон, География в 17 книгах, М.—Л., 1964, кн. XI, гл. XIII, 2.

8 Геродот, кн. VII, 72.

9 В. В. Латышев, Известия древних писателей о Скифии и Кавказе («Вестник древней истории», 1948, № 1).

10 Геродот, кн. I, 104.

11 Նույն տեղում, գիրք III, 97։

12 Նույն տեղում, գիրք I, 104, գիրք IV, 37։

13 Նույն տեղում, գիրք VII, 79։

Սասպիրների բնակատեղը Ստրաբոնը հիշատակել է Եկեղիքի (Ակիլիսենե) կողքին՝ Սիսպիրիտիդա անունով, որպես Հայաստանի հյուսիս-արևմտյան սահմանագավառ։ Արգոնավորդների առասպելական զրույցում հույները Հայաստանի հյուսիս-արևմտյան սահման են ճանաչել Ակիլիսենեն ու Սիսպիրիտիդան, հարավ-արևելյանը՝ ընդհուպ Կալաքենե ու Աղիաբենե[14]։ Այդ ծայրամարգերի միջև, ըստ նրանց, բնակվել է մի ժողովուրդ՝ սերած մի նախահորից՝ Արմենոսից։ Դիցաբանական այդ զրույցում, անշուշտ, որևէ արժեք չունեն «Արմենոս» կոչվող Հայոց նախնու (ըստ հին հույների) թեսալացի լինելը և այլ հնարանքները, որոնք պատկանում են Ալեքսանդր Մակեդոնացու գաղութակալական քաղաքականությունն «արդարացնող» տուղեկիցներին՝ Կիրսիլոս Փարսալեցուն և Միդիոս Լարիսացուն[15]։ «Դժվար է հավատալ Ալեքսանդրի պատմիչների մեծամասնությանը, որովհետև նրանք անփույթ են վերաբերում փաստերին՝ հանուն Ալեքսանդրի փառքի»,—գրում է Ստրաբոնը[16]։ Այդ զրույցի արժանիքը Հայաստանի սահմանների և նրա բնակիչների համացեղության, համալեզվության մասին բերված տեղեկությունն է։

Ստրաբոնը տեղեկացնում է, որ Ակիլիսենեն «նախկին ժամանակներում եղել է սոփենացիների գերիշխանության ներքո»[17]։ Այս տեղեկությունն անկասկածելի է դարձնում Ակիլիսենե գավառի նույնացումը Եկեղիքին։ Եկեղիքից հյուսիս գտնվող Սպեր ցեղագավառի նույնությունը Ստրաբոնի հիշած Սիսպիրիտիդային և սպերացիների նույնությունը Հերոդոտի հիշած սասպիրներ ցեղին նույնպես պիտի համարել անվիճելի։

Այսպիսով, Աքեմենյան 18-րդ սատրապության մեջ մտնող մատիենների ու սասպիրների բնակատեղերը մեզ հայտնի են։ Իսկ ալարոդիների բնակության շրջանի մասին ուղղակի տեղեկություններ չեն պահպանվել։ Բայց Հերոդոտը տեղեկացնում է, որ ալարոդիներն ու սասպիրները արշավանքների ժամանակ զինվել են կոլքերի նման՝ գլխներին փայտե սաղավարտ, անմշակ կաշվից պատրաստած փոքր վահաններով, կարճ նիզակներով և դաշույններով։ Նման զինվածությունն անգամ հերքում է ալարոդիների և ուրարտացիների նույնացման ենթադրությունը։ Ուրարտական կամ Արարատյան թագավորության զորքերի զինվածությունը մեզ քաջածանոթ է ոչ միայն բևեռագիր աղբյուրներից ու ասորեստանյան քանդակազարդումներից, այլև հարուստ պեղածոներից։

Ալարոդիների մասին Հերոդոտի հաղորդումների համաձայն՝ այդ ցեղագավառը պիտի որոնել Կողքիտի, Սպերի և Հալիսի վերին հոսանքի շրջանում բնակվող մատիենների միջև, որովհետև միևնույն՝ 18-րդ սատրապության մեջ մտնող մատիենները կռվել են իրենց արևմտյան ու մերձավոր (նաև ցեղակից) հարևանների՝ պափլագոնացիների, իսկ ալարոդիները՝ իրենց մերձավոր սասպիրների հետ համատեղ։

«Ալարոդիներ» ցեղանունը թե ինչ օրինաչափությամբ է մակաբերվում Ուրարտու—Արարատ երկրանունից, մեզ հայտնի չէ։ Սակայն միտումը պարզ է. որովհետև 18-րդ սատրապության «սասպիրներ» ցեղը տեղադրվում է Սպեր

---

14 Страбон. кн. XI, гл. IV, 8.
15 Նույն տեղում, գիրք XI, գլուխ XIV, 12։
16 Նույն տեղում, գիրք XI, գլուխ VI, 4։
17 Նույն տեղում, գիրք XI, գլուխ XIV, 12։

գավառում, իսկ «մատիեններ» ցեղի բնակատեղը (Հալիս գետի վերին հոսանքի շրջան) արհեստականորեն փոխադրվում է Փոքր Զավի վերին հոսանքի շրջանը, ուստի Ճորոխի ու Փոքր Զավի ավազանները միմյանց կապակցելու համար «ալարոդիներ» կոչված ցեղագավառը զետեղվում է այդ շրջանների միջև՝ շուրջ 700 կմ ձգվող տարածության վրա։ Այսպես, Գր. Ղափանցյանը գրում է. «Եթե սասպիրների (կամ հետագա՝ հեսպերների-իսպիրների) տեղը դնենք այժմյան Ճորոխի հովտում, ուր նրանց սահմանակից էին (հյուսիսի՞ց) տայերը («տաոխները»), իսկ մատիենները բռնում էին այժմյան Պարսկական Ատրպատականի հողամասերը, ապա ալարոդիները կընակվեին դրանց մեջտեղում, այդ տարածությունն է անշուշտ այժմյան Արարատյան դաշտավայրը, որի «Արարատ» (կամ «Այրարատ») անունն անդամ մնացել է այդ Urart||arart նախնականից, իսկ վերջինիս arart—ararat-ի նոր դիսիմիլատիվ ձևն է Հերոդոտի alarod-ը, որպես ցեղանուն»[18]։

Իրականում ո՞չ Աքեմենյաններն են կազմակերպել այդպիսի անհիմնավոր վարչական միավորում, ո՞չ էլ Հայաստանին ու նրա տեղադրությանը ծանոթ Հերոդոտն է հաղորդել նման տեղեկություն։ Հերոդոտի ճանաչած Հայաստանն այն ընդարձակ երկիրն է, որն Ասորեստանից անմիջաբար տարածվել է Հյուսիս[19], Կիլիկիայի սատրապությունից կամ Եփրատ գետից արևելք, հարավարևելքում տարածվելով մինչև Փոքր Զավի վերին հոսանքի շրջանը՝ Մարաստանի Մատիենե ծայրամարզը, այդ երկրից են սկիզբ առել Հալիսը, Եփրատը, Տիգրիսները, Մեծ Զավը[20]։ Հերոդոտի նկարագրած Հայաստանն ակնհայտորեն գրեթե համընկնում է VII դ. «Աշխարհացույցի» Մեծ Հայք աշխարհին։ Տարբեր սատրապությունների միջև Հայաստանի տրոհման մասին Հերոդոտի գրքում որևէ ակնարկ չկա։ Հերոդոտը գրում է. «Պակտիկեից, Հայաստանից և հարակից մարզերից՝ մինչև Եվքսինյան Պոնտոս, ներմուծվել է 400 տաղանդ։ Այդ 13-րդ մարզն է»[21]։ Այսինքն՝ Աքեմենյան Իրանի 13-րդ սատրապության մեջ, Հայաստանից բացի, մտել են Պակտիկե երկիրը, ինչպես նաև Եվքսինյան Պոնտոսի ու Հայաստանի արանքում զետեղվող շրջանները։

Դեռևս չեն պարզաբանվել նաև Պակտիկե երկրի անվան և տեղադրման հարցերը։ Հ. Կիպերտը Պակտիկեն որոշ վերապահությամբ տեղադրում էր Արևելյան Տիգրիսի (Ջերմ) ավազանում՝ Մոկս նահանգից հարավ[22]։ Հ. Մանանդյանն անընդունելի էր համարում այդ ենթադրությունը և գտնում, որ Պակտիկե երկրի թե՛ տեղը, թե՛ անունը դեռևս անորոշ են և ենթակա ճշգրտման[23]։ Հ. Կիպերտի կարծիքն այժմ պաշտպանում է Ս. Երեմյանը[24]։

Հերոդոտը Պակտիկա անունով մի մարզ էլ հիշատակում է Քաբուլ գետի հովտում՝ այժմյան Աֆղանստանում[25], որը, անշուշտ, չէր կարող Հայաստանի հետ դասվել միևնույն վարչամիավորման՝ 13-րդ սատրապության մեջ։

---

18 Գ ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 230։

19 Г е р о д о т, кн. I, 104.

20 Նույն տեղում, գիրք I, 72, 180, 194, գիրք V, 49, 52։

21 Նույն տեղում, գիրք III, 93։

22 H. K i e p e r t, Lehrbuch der alten Geographie, Berlin, 1878, S. 80.

23 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա. Երևան, 1944, էջ 55։

24 «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 424։

25 Г е р о д о т, кн. III, 93. кн. VII, 67, 68.

Պակտիկեն չենք կարող փնտրել նաև ո՛չ Հերոդոտի նկարագրած Հայաստանի վերոհիշյալ սահմանների մեջ, ո՛չ Հայաստանից հարավ (այդ կողմում անմիջաբար սահմանակից էր Ասորեստանին), ո՛չ էլ հարավ-արևելք, որտեղ Հայաստանի անմիջական դրացի երկիրն էր Մարաստանը։

13-րդ սատրապության մասին Հերոդոտի տեղեկությունների հիման վրա Պակտիկեն ամենից առաջ պիտի փնտրել նրա նկարագրած Հայաստանի Եփրատյան սահմանից արևմուտք։ Հիշյալ տարածքը հայ հին հեղինակներին հայտնի էր Կապուտկե անունով։ Սեբեոսը Կապուտկեն հիշատակում է «առ Կիլիկեաւ մինչև ցեզը ծովուն Մեծի Արևմտից»[26]։ Կապուտկեն Դարեհ I Աքեմենյանի արձանագրություններում հիշատակված նույն Կատպատուկա երկիրն է, որը հին հույները (Հերոդոտ) կարող էին ընկալել Պակտիկե աղավաղված անվանաձևով։

Ստրաբոնը վկայում է, որ այդ նույն տարածքը կոչվում էր Կատաոնիա, որի բնակիչները լեզվով և ցեղային այլ հատկանիշներով հնում զանազանվում էին կապադովկացիներից։ Նա գրում է. «Հին [հեղինակները] կատաոնցիներին համարել են առանձին ժողովուրդ՝ հակադրելով նրանց կապադովկացիներին որպես այլացեղերի։ Ժողովուրդներին թվարկելիս նրանք Կատաոնիան դնում էին Կապադովկիայից հետո, այնուհետև՝ Եփրատը և նրանից այն կողմ բնակվող ցեղերին, այնպես որ Կատաոնիային վերագրել են նույնիսկ Մելիտինեն»[27]։

Մեր համոզմամբ, Կատպատուկա, Կապուտկե, Պակտիկե, Կատաոնիա անունները վերաբերում են միևնույն երկրին, որը տարածվում է Հայաստանի Եփրատյան սահմանից արևմուտք, Բուն, Մեծ կամ Առաջին Կապադովկիայից արևելք, Կիլիկիա սատրապությունից հյուսիս և Եվքսինյան Պոնտոսից հարավ։ Այս տարածքը Հայաստանին միացնելու դեպքում միայն 13-րդ սատրապությունը կարող էր սահմանակից դառնալ Եվքսինյան Պոնտոսին։ Պատահականություն չէ, որ Դարեհ I արքայի արձանագրություններում (Պերսեպոլսի, Շուշի, Բաղհաստանի, Նաքշ-ի Ռուստամի) հիշատակված երկրացանկերում Կատպատուկան առանց բացառության դրված է Արմինայից անմիջապես հետո։ Ըստ որում՝ նույն արձանագրություններում Հայաստանը (հին պարսկերեն՝ Ար-Մինա, էլամերեն՝ Հար-Մինուա կամ Խար-Մինուա, ասորերեն՝ Ուրարտու) ընդգծվում է որպես համատարր, ամբողջական և առանձին երկիր։

Աքեմենյան աշխարհակալության մեջ սատրապությունները կազմակերպվել են ըստ ցեղերի ու ժողովուրդների՝ երբեք չտրոհելով նրանց ամբողջականությունը։ Աքեմենյանները միևնույն սատրապության մեջ հաճախ դասել կամ միավորել են մի քանի ժողովուրդ կամ երկիր, բայց երբեք միևնույն ժողովուրդն ու նրա երկիրը չեն տրոհել տարբեր սատրապությունների միջև։ Ուրեմն անտրամաբանական ու աննախադեպ պիտի լիներ նաև հայ ժողովրդի ու Հայաստանի տրոհումը երկու սատրապության միջև։

Այսպիսով, թե՛ հին պարսկական, թե՛ հին հունական դրավոր սկզբնաղբյուրներում Հայաստանը մ. թ. ա. VI դ. վերջում վկայակոչված է որպես հա-

---

26 «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 9։

27 Страбон, кн. XI, гл. I, 2.

մատաբր ժողովրդով բնակեցված միատնական երկիր։ Իսկ 18-րդ սատրապության մեջ հիշված «ալարոդիներ» ցեղանունը ո՛չ տեղադրությամբ, ո՛չ էլ անունով, առնչություն չունի Ուրարտու=Արարատի կամ Հերոդոտի պատկերած՝ 13-րդ սատրապության մեջ ընդգրկված Հայաստանի հետ։

13-ое и 18-ое САТРАПСТВА АХЕМЕНИДСКОГО ВЛАДЫЧЕСТВА

МАКСИМ КАТВАЛЯН

Резюме

В специальной литературе господствует мнение о том, что название страны Урарту-Арарат у древнегреческого историка Геродота упоминается в измененной форме «алародии» (ἀλαρόδιοι) и притом в виде названия племени. Опираясь на то, что у Геродота алародии, матиены, саспиры упоминаются в 18-ом сатрапстве Ахеменидского владычества, исследователи считают, что Армения в VI в. до н. э. представляла собой разноплеменную страну, разделенную на два сатрапства. Однако в основе данного предположения лежит ошибочное отождествление понятий матиены (племя) и Матиене (область). Геродот упоминает племя матиенов в Каппадокии, на правом берегу Галиса (кн. 1, гл. 72) и «страну» Матиене—южнее оз. Урмии, в области истока реки Малый Заб. Геродот и Гекатей матиенов упоминают также в качестве соплеменников пафлагонцев, мосхов и колхов. Следовательно, область обитания алародиев следует локализовать непосредственно по соседству с колхами, саспирами, матиенами и пафлагонцами.

Судя по письменным источникам, Армения в VI в. до н. э. не была разделена между 13-ым и 18-ым сатрапствами и представляла собой целостную страну, входившую в 13-ое сатрапство.